# Վիքիպեդիա

Ազատ հանրագիտարան, որը կարող է խմբագրել յուրաքանչյուր ոք։



## Շաբաթվա հոդված

< «Շաբաթվա հոդված» նախագիծ



Մալարիան՝ մոծակների միջոցով փոխանցվող վարակիչ հիվանդությունը, որն առաջանում է *Plasmodium* մակաբույծների հետևանքով, հաջողությամբ վերացվել կամ զգալիորեն կրճատվել է աշխարհի շատ տարածաշրջաններում, սակայն այլ վայրերում այն դեռևս լայնորեն տարածված է։ Եվրոպայի մեծ մասը, Հյուսիսային Ամերիկան, Ավստրալիան, Հյուսիսային Աֆրիկան և Կարիբյան ավազանը, ինչպես նաև Հարավային Ամերիկայի, Ասիայի և Հարավային Աֆրիկայի որոշ հատվածներ այժմ ազատ են մալարիայից, մինչդեռ Աֆրիկայի կենտրոնական մասի մեծ հատվածում շարունակվում է արձանագրվել այս հիվանդության փոխանցման բարձր մակարդակ։

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) «վերացումը» (կամ «մալարիայից ազատ կարգավիճակը») սահմանում է որպես վերջին երեք տարիների ընթացքում տեղական փոխանցման (տեղական դեպքերի) բացակայություն։ Նրանք նաև սահմանում են «նախավերացման» և «վերացման» փուլերը, երբ երկրում տարեկան գրանցվում է համապատասխանաբար 5-ից կամ 1-ից պակաս դեպք՝ ռիսկի տակ գտնվող յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով։ 2021 թվականին մալարիայի վերահսկման և վերացման համար միջազգային ու ազգային ֆինանսավորման ընդհանուր ծավալը կազմել է 3,5 միլիարդ դոլար, ինչը կազմում է անհրաժեշտ գնահատված գումարի միայն կեսը։ Ըստ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ)՝ մալարիայից ազատ աշխարհ ունենալու նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, որ տարեկան ֆինանսավորումն ավելի քան կրկնապատկվի՝ հասնելով նախատեսված 6,8 միլիարդ ԱՄՆ դոլարի թիրախին։

Աշխարհի այն հատվածներում, որտեղ կենսամակարդակը բարձրանում էր, մալարիայի վերացումը հաճախ հանդիսանում էր պատուհանների ցանցերի ներդրման և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման կողմնակի արդյունք։ Լավագույն փորձը ենթադրում է մի շարք սովորաբար միաժամանակյա միջամտությունների կիրառում։ Դրանք ներառում են հակամալարիային դեղամիջոցներ՝ վարակը կանխարգելելու կամ բուժելու համար, հանրային առողջապահության ենթակառուցվածքների բարելավում՝ վարակված անձանց ախտորոշելու, մեկուսացնելու և բուժելու համար, մահճակալի ցանցեր (մոծակապաշտպան ցանցեր) և այլ մեթոդներ, որոնք նպատակ ունեն կանխել մոծակների կողմից մարդկանց կծելը, ինչպես նաև վեկտորների (փոխանցողների) հսկողության ռազմավարություններ, ինչպիսիք են թրթուրների ոչնչացումը միջատասպաններով (լարվիցիդներով), էկոլոգիական վերահսկողությունը, օրինակ՝ մոծակների բազմացման վայրերի չորացումը կամ թրթուրներով սնվող ձկների բազմացումը, և տարածքների ներքին մակերեսների մնացորդային ցողումը միջատասպաններով։

Հայաստանում մալարիայի վերջին էնդեմիկ դեպքը արձանագրվել է 2006 թվականին, որից հետո 2011-ին ԱՀԿ-ի կողմից Հայաստանը նույնպես ԱՀԿ-ի կողմից սերտեֆիկացվեց որպես մալարիայից զերծ երկիր, դառնալով ԱՄԷ-ից, Մարոկկոյից և Թուրքմենստանից հետո չորրորդ երկիրը, որը 21-րդ դարում հաջողությամբ վերացրել է մալարիան իր տարածքում։ **Ավելին⇒**

## Նորություններ

← «Նորություններ»

**Շարունակվող իրադարձություններ**՝ Ֆուտբոլի աշխարհի առաջնություն 2026 • Իսրայելա-ամերիկյան հարվածներ Իրանին (2026) • Իրանի բողոքի ցույցեր • Ռուսաստանի ներխուժում Ուկրաինա



- հուլիսի 3-ին **Կեյկո Ֆուխիմորին** *(լուսանկարում)* դարձել է Պերուի պատմության մեջ ընտրություններում հաղթած առաջին կին նախագահը։ Նա երկրի նախկին նախագահ Ալբերտո Ֆուխիմորիի դուստրն է։
- հունիսի 24-ին Վենեսուելայում տեղի ունեցած **երկու երկրաշարժի** *(տեսանյութում)* հետևանքով զոհվել է ավելի քան 1700 մարդ և ավելի քան 46000-ն անհետ կորել է։
- հունիսի 22-ին հրաժարական է տվել Միացյալ Թագավորության վարչապետ *Քիր Սթարմերը*։
- հունիսի 7-ին կայացած Հայաստանի խորհրդարանական ընտրություններում հաղթել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջնորդած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը։

- մայիսի 14-ին *Էվիկա Սիլինյան* հայտարարել է Լատվիայի վարչապետի պաշտոնից իր հրաժարականի մասին։
- MV Hondius զբոսանավում *հանտավիրուսի բռնկումը* ստիպել է մնացած ուղևորների մեծ մասին կարանտինի ենթարկվել նավի վրա։



Վերջերս մահացածներ՝ Սեմ Նիլ • Բոնի Թայլեր • Արտաշես Ալեքսանյան • Ռաիսա Մկրտչյան • Ալան Գրինսպեն • Աբդուլլահ Իբրահիմ

Հաջորդ թողարկում | Պահոց | Խմբագրել

# Գիտե՞ք, որ…

← «Գիտե՞ք, որ…»





- …մի ամերիկուհի ողջ է մնացել այն բանից հետո, երբ **երկնաքարի** *(լուսանկարում)* 3,86-կիլոգրամանոց *բեկորը* ծակել է տան տանիքը և հարվածել նրան։
- …*այս ֆուտբոլիստի* խփած գոլից հետո մրցավարը ցանկացել է VAR համակարգով ստուգել դրա վավերականությունը, սակայն համակարգը հասանելի չի եղել, քանի որ մարզադաշտի աշխատակիցներից մեկն անջատել էր սարքավորումը՝ հեռախոսը լիցքավորելու նպատակով։
- …ԱՄՆ-ի *ութերորդ նախագահի* մայրենի և առաջին տիրապետած լեզուն հոլանդերենն է եղել։
- …աշխարհի բոլոր երկրներն *այցելելու համար* անհրաժեշտ է ստանալ 42 անձնագիր։
- …Մեծ Պահքի և Սուրբ շաբաթվա ընթացքում Վենեսուելայում կարող են **ջրախոզուկի** *(լուսանկարում)* միս ուտել, քանի որ Կաթոլիկ եկեղեցին թույլատրել է այն ուտել, մինչդեռ մյուս մսատեսակներն արգելված են։
- …երբեմն *փողոցային մարքեթինգային արշավի* համար վճարված տուգանքը կարող է ավելի շահավետ լինել, քան ավանդական գովազդի արժեքը։

Հաջորդ թողարկում | Արխիվ | Խմբագրել

## Ներկայացում

Վիքիպեդիան առցանց, բազմալեզու, խմբային հանրագիտարանային նախագիծ է, որն աշխատում է վիքի ձևաչափով։ Նախագիծը նպատակ ունի տրամադրել ազատ, հավաստի և ստուգելի բովանդակություն, որը յուրաքանչյուրը կարող է փոփոխել և բարելավել։

Վիքիպեդիան առաջնորդվում է հիմնարար սկզբունքներով, իսկ բովանդակությունը հրապարակվում է Creative Commons BY-SA արտոնագրի ներքո։ Այն կարելի է պատճենել և օգտագործել՝ պահպանելով սույն արտոնագրի պայմանները։ Վիքիպեդիայում ողջ տեղեկատվությունը ներկայացված է ազատ, առանց գովազդի և իր օգտագործողների անձնական տվյալների օգտագործման։

Վիքիպեդիայի հոդվածների հեղինակները կամավորներն են։ Նրանք կոորդինացնում են իրենց ջանքերը համաձայն համայնքում ընդունված կանոնների և ուղեցույցների ու առանց առաջնորդների։

Այս պահին Հայերեն Վիքիպեդիայում կա՝

| **329 955** | **674** |
|---|---|
| հոդված | ակտիվ խմբագիր |

## Համագործակցություն

Վիքիպեդիան հանրագիտարան է, որն ստեղծվել և զարգանում է քեզ նման այցելուների կողմից։ Այստեղ գործում է «մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի համար» սկզբունքը։

Առաջին անգա՞մ ես փորձում. օգտվի՛ր օգնության դասընթացից։ Չգիտես՝ ինչի՞ց սկսել. ահա մի քանի խորհուրդ։

---

**Մասնակցի՛ր այս ամիս կազմակերպվող նախագծերին։**

- **Ֆուտբոլի աշխարհի առաջնություն 2026**
- Հոդվածներ «Գյուղատնտեսական հանրագիտարանից»
- «Վիքիպեդիա» կրթական ծրագիր
- Բժշկական կարևորագույն հոդվածներ

Նախագծի էջ | Հաջորդ թողարկում

## Այս օրը պատմության մեջ

← «Այսօր պատմության մեջ



- 622 թ. - սկսում է իսլամական օրացույցը:
- 1683 թ. - Թունյինի թագավորության բանակը Թայվան կղզու մոտ ջախջախվեց Ցին դինաստիայի ծովային ուժերի կողմից:
- 1860 թ. - շվեդ գյուտարար Ալֆրեդ Նոբելն առաջին անգամ փորձարկեց դինամիտը:
- 1923 թ. - **Բենիտո Մուսոլինին** արգելեց դրամական խաղերն Իտալիայում:
- 1931 թ. - ծնվել է Վիկտոր Բալայանը, հայ արձակագիր, լրագրող, թարգմանիչ:
- 1945 թ. - ԱՄՆ-ի Նյու Մեքսիկո նահանգում կատարվեց ատոմային ռումբի առաջին հաջող փորձարկումը:
- 1989 թ. - մահացել է Հերբերտ ֆոն Կարայանը, ավստրիացի աշխարհահռչակ դիրիժոր (ծնվ. 1908):
- 1990 թ. - Ուկրաինան անկախացավ ԽՍՀՄ-ից:
- 1992 թ. - Արցախյան ազատամարտերի ժամանակ ԼՂՀ ԻՊՈւ ստորաբաժանումները լայնածավալ հարձակում են սկսել գրավված Ներքին Հոռաթաղ, Մեծշեն և Մոխրաթաղ գյուղերի ուղղությամբ:

## Օրվա պատկեր

← «Օրվա պատկեր»



Վիքիպեդիան սպասարկում է Վիքիմեդիա հիմնադրամը, ինչպես նաև ստորև նշված քույր նախագծերը, որոնք համակարգվում են Մետավիքիում՝

Վիքիպահեստ (https://commons.wikimedia.org/wiki/Գլխավոր_էջ?uselang=hy)
Տեսածայնային նյութերի շտեմարան

Վիքիքաղվածք
Մեջբերումներ

Վիքիտվյալներ (https://www.wikidata.org/wiki/Wikidata:Main_Page?uselang=hy)
Տվյալների շտեմարան

Վիքիճամփորդ
Ճամփորդի ուղեցույց

Վիքիբառարան
Բառարան

Վիքիգրքեր
Ձեռնարկներ

Վիքիդարան
Գրադարան

Վիքիլսարան
Դասընթացներ և վարժություններ

Վիքինորություններ
Նորությունների կայք

Վիքիցեղեր (https://species.wikimedia.org/wiki/Գլխավոր_էջ?uselang=hy)
Տաքսոնոմիական տեղեկատու

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Գլխավոր_էջ&oldid=5662114» էջից